



- 1) իրագործում է տարածքային կառավարման մակարդակում տնտեսության զարգացման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը:
- 2) ապահովում է մարզի զարգացման ռազմավարության մշակումը և մշտադիտարկման իրականացումը:
- 3) ապահովում է մարզի զարգացման ռազմավարության իրականացման տարեկան գործունեության ծրագրի մշակման և լիազոր մարմնի հաստատմանը ներկայացնելու աշխատանքների, ինչպես նաև հաստատված ծրագրի մշտադիտարկման իրականացումը:
- 4) աջակցում է համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիայի տրամադրման նպատակով նախնական հայտերի և ամբողջական փաթեթների կազմման աշխատանքներին և դրանք ներկայացնում է տարածքային կառավարման ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող մարմնին, մասնակցում մշտադիտարկման աշխատանքներին:
- 5) ուսումնասիրում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի կատարման ընթացքը: Վերլուծում, ամփոփում և նախապատրաստում է առաջարկություններ:
- 6) ըստ անհրաժեշտության տրամադրում է խորհրդատվություն համայնքների ղեկավարներին՝ սուբվենցիոն, զբոսաշրջային և ներդրումային ծրագրերի կազմման գործում:
- 7) աջակցում է ներդրումային ծրագրերի մշակման աշխատանքներին և ստուգում է դրանց համապատասխանությունը լրացման կարգի պահանջներին:
- 8) ապահովում է մարզի տարածքում միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցությունը:
- 9) աջակցում է մարզում զբոսաշրջության ոլորտի պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքներին:
- 10) կազմակերպում է հյուրանոցային տնտեսությունների գույքագրումը ու հյուրանոցային տնտեսությունների և այլ կազմակերպությունների հետ զբոսաշրջության բնագավառում համագործակցությունը:
- 11) աջակցում է մարզի արդյունաբերության և զբոսաշրջության ոլորտի կազմակերպություններին՝ հանրապետական և միջազգային ցուցահանդեսներին մասնակցելու, Հայաստանի Հանրապետության մարզերի և այլ երկրների, միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ համագործակցություն իրականացնելու հարցում:
- 12) տրամադրում է խորհրդատվական աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությամբ զբաղվող արտադրական և զբոսաշրջային տնտեսավարող սուբյեկտներին՝ գործունեության ընդլայնման և արդյունավետության ապահովման ուղղությամբ:

- 13) ապահովում է միջազգային, բարեգործական (այդ թվում՝ սփյուռքի), հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից մարզում իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվության հավաքագրման և ամփոփման աշխատանքները:
- 14) իր լիազորությունների շրջանակներում իրականացնում է մարզի տնտեսական հնարավորությունների բացահայտման ուղղությամբ աշխատանքների համակարգումը, ինչպես նաև մարզի զարգացմանը միտված առաջարկությունները ներկայացնում է լիազոր մարմին:
- 15) Մարզպետի հանձնարարությամբ նախապատրաստում է բաժնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր և այլ փաստաթղթեր:
- 16) Աջակցում է մարզի տարաքում իրականացվող ծրագրերին:
- 17) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ:

### **III. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ**

8. Բաժինն իր գործունեությունն իրականացնում է մարզպետի աշխատակազմի հաստիքացուցակով նախատեսված կազմով:
9. Բաժնի գործունեությունը համակարգում է Մարզպետը, իր համակարգման լիազորությունների շրջանակներում տալիս է հանձնարարականներ և դրանց կատարման նկատմամբ հսկողություն է իրականացնում մարզպետի Աշխատակազմի գլխավոր քարտուղարը:
10. Բաժնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է բաժնի պետը:
11. Բաժնի պետը և աշխատողը համարվում են քաղաքացիական ծառայողներ:
12. Բաժնի քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքները և պարտականությունները, շփումները և հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիանները սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայողի պաշտոնի անձնագրով /աշխատատեղի նկարագրով/:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Ա.ԳԵՎՈՐԳՅԱՆ